12 .06.2026թ

Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հերթապահ դաստիարակի (0.59 միավոր դրույքաչափ) թափուր պաշտոնի համար՝

Մրցույթին մասնակցելու համար ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 17 փետրվարի 2022 թ. թիվ 08-Ն հրամանի անհրաժեշտ է ներկայացնել 12-րդ կետով սահմանված հետևյալ փաստաթղթերը

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին կարող են մասնակցել 2024թ մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրին համապատասխանող անձինք:

Հերթապահ դաստիարակի մրցույթին կարող է մասնակցել այն անձը,ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 12-ից մինչև հուլիսի 9-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 9^{00}-17^{00} թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզում /Արագածի զ/ծ 20/:
Մրցույթը տեղի կունենա հուլիսի 10-ին ժամը 11:00-ին թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզում:

Տեղեկությունների համար զանգահարել 0231 4 26 77 հեռախոսահամարով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Արագածի զ/ծ 20
Վեբ կայք՝ https://ejmiatsin.am/
Էլ. Փոստ. tiv7.zvartnoc@mail.ru